Արձանագրություն N 2

ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի <<Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> ՊՈԱԿ-ում հիմնանորոգման (հատակի բարձրացում և հիմնանորոգում, սանհանգույցի հիմնանորոգում) աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.10.2017թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս.Մաթևոսյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Վ.Առաքելյան / գնահատող /
	Ա.Քոչարյան /գնահատող/
	Ն.Մարտիրոսյան / բացող /
	Ն.Մանուկյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն.Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ս.Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը 17:30-ին.

բ) գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 535 176 (հինգ հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ.

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագե-ռատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	ք.Երևան, Հալաբյան 41ա	80 000	16 000	96 000
2	<<ԳՈԼԴ-ՆԵՏ>> ՍՊԸ	ք.Վանաձոր, Տարոն 2 ՔՇՀ 3 58 3	100 000	-	100 000
3	<< Տիգրանշին>> ՍՊԸ	ք.Վանաձոր, Վարդանանց 17	110 000	-	110 000
4	<<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ և <<Գոռտեխ-պրոեկտ>> ՍՊԸ	ք.Վանաձոր, Մյասնիկյան 3	145 000	-	145 000

5	<<ՄԻՔՆԱՐ>> ՍՊԸ	ք.Իջևան, Մետաղագործների 15/7	199 000	-	199 000
6	<<Մառք>> ՍՊԸ	ք.Երևան, Կոմիտասի պող. 54 Վ, տարածք 304	425 000	-	425 000

դ) ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել հայտերի արդյունքների ամփոփմանը հաջորդող աշխատանքային օրը.

ե) <<ԳՈԼԴ-ՆԵՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ ներկայացված փաստաթղթերում ընկերության տնօրեն՝ Արմեն Օհանյանի փոխարեն էլեկտրոնային ստորագրությունը դրվել է Սամսոն Մարգարյանի կողմից, որը չունի դրա համար անհրաժեշտ լիազորություն: Վճարման պահանջագրի 8-րդ կետի մեջ մասնակցի կողմից <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե>> արտահայտության փոխարեն նշվել է <<ՀՀ Լոռու մարզպետարան>> իսկ 9-րդ կետի <<ՀՎՀՀ՝ 02565827>>-ի փոխարեն նշվել է <<ՀՎՀՀ՝ 06930769>>:

զ) համատեղ գործունեության պայմանագրով հայտ ներկայացրած <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ-ի և <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ նշված անճշտությունները ուղղվել են մասամբ՝ ներկայացվել են իրական շահառուների մասին ճտված հավելվածը և <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն>> լիցենզիային կից՝ բնակելի, հասարակական և արտադրական ներդիրը: <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն>> լիցենզիային կից կապի ներդիրը չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս.Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագե-ղատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	բավարար
2	<< Տիգրանշին>> ՍՊԸ	բավարար
3	<<ՄԻՔՆԱՐ>> ՍՊԸ	բավարար
4	<<Մառք>> ՍՊԸ	բավարար
-	<<ԳՈԼԴ-ՆԵՏ>> ՍՊԸ	անբավարար
-	<<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ և <<Գոռտեխ-պրոեկտ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ս.Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից պատասխանն ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2017 թվականի հոկտեմբերի 11-ը ժամը 12:30-ն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս.Մաթևոսյան

Անդամ՝ ---------- Վ.Առաքելյան

---------- Ա.Քոչարյան

---------- Ն.Մարտիրոսյան

---------- Ն.Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն.Հարությունյան